

Գալիք տարի Արցախում համապետական երկու ընտրություններ են սպասվում

Գալիք տարի կայանալիք ԼՂՀ Ազգային ժողովի ընտրություններին համամասնական եւ մեծամասնական ընտրակարգով ընտրվողների մանդատների հարաբերակցությունը՝ գործող 17 համամասնական և 16 մեծամասնականի փոխարեն կլինի՝ 22 համամասնական և 11 մեծամասնական:



ՍՏՓԱՆԱԿԵՐՏ, 24 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՑԱԽՊՐԵՍ: Այս մասին այսօր՝ դեկտեմբերի 24-ին տեղի ունեցած ԼՂՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահի մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարել է Սրբուհի Արզումանյանը՝ հավելելով, որ այն կանցկացվի մայիս ամսվա սկզբին: Կառույցի ղեկավարի հաղորդմամբ 2015 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ կմտնի ընտրական նոր օրենսգիրքը, որտեղ ներկայացված կլինի ընտրագրավի, նախընտրական հիմնադրամների, թեկնածուների գույքի եւ եկամուտների հայտարարագրման և այլ հարցերի առումով կատարված լրացումները: Մասնավորապես, նոր օրենսգրքով սկսած երկրորդ համարից յուրաքանչյուր հնգյակում պարտադիր պետք է սեռերի հարաբերակցությունը լինի 4/1:

Խորհրդարան մտնելու համար նվազեցվել է նվազագույն շեմը՝ սահմանելով կուսակցությունների համար՝ 5, կուսակցությունների դաշինքների համար՝ 7 տոկոսը՝ գործող 6-ի եւ 8-ի փոխարեն: Անդրադառնալով անցող տարում կազմակերպված և անցկացված տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններին, Ս. Արզումանյանը նշել է, որ 13 համայնքներից՝ 5-ում եղել է հերթական, իսկ 6-ում՝ արտահերթ ընտրություններ: Անցած ընտրությունների վերլուծության արդյունքների պատկերը հետևյալն է՝ ընտրված համայնքի ղեկավարներից երկուսն «Ազատ Հայրենիք» կուսակցությունից են, իսկ մյուսներն՝ անկուսակցական:

ԿԸՀ նախագահի խոսքով, գալիք տարում բացի խորհրդարանականից, ավելի քան 200 համայնքներում կլինի նաև ՏԻՄ ընտրություններ, որը նախատեսում է անցկացնել օգոստոսին:

Artsakhpress.am

<http://artsakhpress.am/arm/news/9900/galiq-tari-arcakhum-hamapetakan-erku-yntrutyunner-en-spasvum.html>